600.0434.28.12.16

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 դեկտեմբերի 2016 թվականի №434Ա
քաղ. Երևան

«ՏԱՔՍԻ-ԲԱՐՈՆ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ՌԱԴԻՈԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՀԱՄԱՐ ՌԱԴԻՈՀԱՃԱԽԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՏԿԱՑՄԱՆ №9/1-34 ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՄԻ ՇԱՐՔ ՈՐՈՇՈՒՄՆԵՐ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասը, «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածը, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «ա» ենթակետը, 78-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերը, Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2011 թվականի մայիսի 11-ի №231Ն որոշումը և հաշվի առնելով սույն թվականի նոյեմբերի 3-ից «ՏԱՔՍԻ-ԲԱՐՈՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության լուծարման փաստը (համաձայն Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական էլեկտրոնային ռեգիստրի տվյալների)՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը որոշում է.

1. Ուժը կորցրած ճանաչել՝
   1) Հայաստանի Հանրապետության տրանսպորտի և կապի նախարարության «Հեռահաղորդակցության հանրապետական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության կողմից 2004 թվականի մարտի 19-ին «ՏԱՔՍԻ-ԲԱՐՈՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը տրամադրված ռադիոէլեկտրոնային միջոցների տեղադրման համար ռադիոհաճախականությունների հատկացման №9/1-34 թույլտվությունը,
   2) Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2009 թվականի օգոստոսի 5-ի «ՏԱՔՍԻ-ԲԱՐՈՆ»

սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը տրամադրված №9/1-34 թույլտվության գործողության ժամկետը երկարաձգելու մասին» №458Ա որոշումը,

3) Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2010 թվականի հոկտեմբերի 27-ի «ՏԱՔՍԻ-ԲԱՐՈՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից ռադիոհաճախականությունների օգտագործման վճարների մասով ունեցած պարտավորության մասին» №582Ա որոշումը,

4) Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2014 թվականի հուլիսի 23-ի «ՏԱՔՍԻ-ԲԱՐՈՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը Հայաստանի Հանրապետության պետական բյուջե գումար փոխանցելը պարտավորեցնելու մասին» №290Ա որոշումը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և նրա գործողությունը տարածվում է 2016 թվականի նոյեմբերի 3-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ Ռ.ՆԱԶԱՐՅԱՆ

ք. Երևան
28 դեկտեմբերի 2016թ.
ժամը 16[00]